



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



17235

1807



2019




## ՆԱԽԱԳԻԾ

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ա Ն Ի

ՍԱԼՄԱՆՏ ԳԱՒԱՈՒԻ ՓԱՅԱԶՈՒԻԿ ԳԻՒՂՈՒՄ ԿԱԶ-  
ՄՈՒԵԼԻՔ

„ՈՒՂԵՑՈՅՑ“ ՄԻՈՒԹԵԱՆ

2001




Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՊԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑԵՑԱԿԱՆ 7.

1907

(85)



369

8-23

Ա

370

2229-ԱԱ

ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՐՍԿԱՍԱՆԻ

ՍԱԼՄԱՆ ԳԱՀԱՄԻ ՓԱՅԱՋՈՒԿ ԳԻՒՂՈՒՄ ԿԱԶ-  
ՄՈՒԵԼԻՐ

**„ՈՒՂԵՑՈՅՑ“ ՄԻՈՒԹԵԱՆ.**

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐՏ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱԼԱՆԵԱՑԻ ՊՈԽԵՔՑՎԱՆ 2.

1907

(85)



4	8
0	5
0	5
5	5



ՀՅԱՀԱՎԱՐԱՎԱՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՌԱԳԱՎԱՐ ՎԻՃԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՐԵԺԵԿՏՈՎԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ ՈՒ ԽԱՌԱՊՐԵԶԵՆՏԱՑԻՈՆ ՁԵՐԱՎԱՃՐԻ

(62) 1992

Արքայի ուղարքութեան առաջարկան վեցերուն Պատիմաց  
Նոսու եւ եւ առաջարկան առաջարկան Են այլ պատիմաց  
Դա քայլաք բարդ ենաց անձեռ անձեռ աշխարհ  
-արաց զաւանաց մի զետեսաց մայթաքրանար  
-աւ բայց ու առաջարկան առաջարկան առաջարկան  
ԵՐԿՈՒԻ ԽԾՍՔ.

Բազմաչարչար հայ-ժողովուրդը պատմա-  
կան զանազան շրջաններն անցնելով, երբեմն  
յաղթուող և երբեմն էլ յաղթող հանգիսանալով,  
իւր առաջնորդողների շնորհիւ երբեմն բարեկե-  
ցիկ կեանք վարելով և երբեմն էլ պատմական  
մեծ սխալներ գործելով և ի զուր հազարաւոր  
անմեղ զոհեր տալով, հասնում է քսաներորդ դա-  
րը, որ դեռ ևս մի ճակատագրական նշա-  
նակութիւն ունի ինչպէս բոլոր ազգերի,  
նոյնպէս և հայ ազգի համար: Ուստի և ամեն մի  
բանիմաց հայի պարտաւորութիւնն է շրջահայեաց  
հեռատեսութեամբ, անցեալի լաջող և անյաջող  
փորձերից օգտուելով, միաբան ձեռք ձեռքի  
տուած զրահաւորուած գիտութեան և արուեստ-  
ների ուսումնասիրութեան մտաւոր, Փիզիքական  
ու բարոյական ինքնազարգացման վահանով՝ նա-  
խապատրաստուի իմաստութեամբ, գիտակցու-  
թեամբ օգտուելու անցեալի փորձերից, որպէս  
զի իւր տոկուն, քրտնաշան աշխատութեամբ,  
բարոյական արիութեամբ ու ազնւութեամբ կա-  
րող լինի արժանավայել կեանք վարել և քաղա-

Քակիրթ ազգերի յարդանքն ու ուշադրութիւնը գրաւել:

Այսպէս ուրեմն, եթէ քսաներորդ դարու ազատագրական շարժումը մի նշանաւոր քաղաքատնտեսի ամելով՝ «արտօնեց ժողովրդական դասակարգերին իրաւունքներ, ընդ նմին և դրեց նրանց վրայ պարտաւորութիւններ, որոնց կատարելու համար պահանջւում է համապատասխան նախապատրաստութիւն»:

Այս երկու խօսքից յետոյ, դառնանք Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղում հիմնուելիք «Ուղեցոյց» միութեան նախագծին, նպատակին, նրա կազմին, նրա իրաւունքներին ու պարտաւորութիւններին և նրա կատարելիք գերին:

### I. «ՈՒՂԵՑՈՅՑԻ» ՆՊԱՏԱԿԸ.

§ 1. Բատ չափու կարողութեան կամենաւլով օգտակար լինել մասնաւորապէս Փայաջուկ գիւղի հասարակութեանը, նրա տնտեսական, մշտաւոր ու բարոյական ինքնաճանաչութեան գործին, ազատել այդ խեղճ գիւղի բնակիչներին բռնութեամբ տիրապետող եկովի և պատահական տարրից, որը կեղծ—ազատամտութեան դիմակի տակ իրան ազդի փրկիչ համարելով, երկպառակութեան որո՞մներ սերմանելով խեղճ ու

կըակ հայ-գիւղացիների մէջ, գիշատիչ անդդի նման կեղեքում ու հարստահարում է նրանց և գրեթէ կորստեան անդունդը մատնում,— հիմնւում է «Ուղեցոյց» գիւղական միութիւնը, որին մասնակցում են գիւղի բոլոր չափահաս բանի-մաց անձինք, առանց կուսակցութեան խորութեան, և առանց որ և է շահախնդրական նպատակների: «Ուղեցոյցը» ցանկանում է ժողովեղի վերածնութեան ասպարիզում իւր միահամուռ գործունէութեամբ գործով արդարացնել այն հանրածանօթ առածը, թէ «Մէկը ամենքի համար և ամենքը մէկի համար», կատարեալ վստահ լինելով, որ բոլոր մեր համագիւղացի օտարութեան մէջ գեգերուող երիտասարդներն համակըռութեամբ կը վերաբերուին «Ուղեցոյցի» նպատակներին և իրենց օժանդակութիւնը ցոյց կը տան խորհրդով և գործով:

## II. «ՈՒՂԵՑՈՅՅ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.

§ 2. «Ուղեցոյց» միութիւնը կազմումէ ընդհանուր ժողովը, խորհուրդը և վերաստուգոյանձնաժողովը: «Ուղեցոյց» միութեան բոլոր գործողները ոչ մի վարձատրութիւն չեն ստանում:

§ 3. «Ուղեցոյցի» անդամ կարող է գրուել

ամէն մի Փայաջուկցի 21 տարեկանից անց՝ վը-  
ճարելով տարեկան մի որոշ գումար, իւր ցան-  
կութեան համաձայն:

§ 4. «Ուղեցոյցի» արդիւնքները կազմւում  
են կամաւոր միանուագ և մշտական նուէրնե-  
րից, կտակներով լատկացրած շարժական և ան-  
շարժ կալուածներից, թատրոնական ներկայա-  
ցումներից և այլն:

§ 5. Անդամներ լինում են՝ Պատուաւոր,  
մշտական և տարեկան: «Ուղեցոյցի» ան-  
դամների թիւը չէ սահմանափակւում:

§ 6. Պատուաւոր անդամներին ընտրում է  
ընդհանուր ժողովը, խորհրդի առաջարկութեան  
համաձայն, եթէ առաջարկած անձն յօդուտ «Ու-  
ղեցոյցի» մի օգտակար գործ է կատարել և կամ  
իւր բոնած հասարակական դիրքով կարող է ա-  
պագայում օգտակար ծառայութիւն մատուցաներ  
նրան:

§ 7. Միանդամից 10 պարսկական թուման  
վճարողը համարւում է մշտական անդամ:

§ 8. Օտարահպատակները կամ Թայաջուկը  
հիւր եղողները կարող են պատուաւոր, մշտա-  
կան կամ տարեկան անդամներ լինել, բայց չեն  
կարող մասնակցել ընդհանուր ժողովին և խորհր-  
դի անդամ ընտրուել:

§ 9. «Ուղեցոյցի» ընդհանուր ժողովները  
լինում են տարեկան և արտակարգ:

§ 10. «Ուղեցոյցի» ընդհանուր ժողովն ընտրում է իւր միջից խորհուրդ, բաղկացած 9 անդամից և վերաստուգող յանձնաժողով 3 անդամից բաղկացած։

§ 11. Խորհրդի և վերաստուգող յանձնաժողովի անդամները ընտրւում են երկու տարի ժամանակով։

§ 12. Խորհրդին մասնակցում են լիակատար ձայնի իրաւունքով բացի ընտրուած 9 անդամից գիւղի քահանայք, երեցփոխը և տանուաէրը։

§ 13. Խորհուրդն իւր նստերին հրաւիրում է խորհրդական ձայնի իրաւունքով գիւղի ուսուցիչներին, վարժուհուն և բժշկին։

§ 14. Խորհուրդը ձայնից առաւելութեամբ ընտրում է իւր միջից խորհրդի նախագահ, քարտուղար և գանձապահ։

§ 15. Քարտուղարը վարում է ընդհանուր ժողովների և խորհրդի օրագրութիւնները և նա է պատասխանատու «Ուղեցոյցի» կանոնաւոր գրագրութիւնների համար։

§ 16. Գանձապահն ընդունում է բոլոր տարեկան և միանուագ նուէրները և ստացական տալիս ժապաւինեալ անդորրամատեանից նախագահի, քարտուղարի, իւր և խորհրդի հերթական անդամի ստորագրութեամբ։ Նա է պատասխանատու գնումարների անթերի պահպանութեան։

§ 17. Խորհուրդն և ընդհանուր ժողովն խառն ժողով կազմելով՝ կարող են փոփոխել «Ուղեցոյցի» կանոնադրութեան նրա է յօդուած նրա կարիքներին և ժամանակակից պահանջներին համաձայն:

§ 18. «Ուղեցոյցի» բոլոր գրագրութիւնները և գործերը գտնուում են խորհրդարանում, ոքը գտնուում է Փայաջուկ գիւղում: «Ուղեցոյցին» պատկանեալ գրամները գտնուում են կանոնաւոր հաշուով վստահելի և ապահով անձանց մօտ:

§ 19. Խորհուրդն իւրաքանչիւր տարի հաշիւ է տալիս ընդհանուր ժողովին իւր գործունէութեան, գրամական ելեմափց մասին, ներկայցնում է նախահաշիւ եկող տարուայ համար, նախապէս յանձնելով վերաստուգող յանձնաժողովի քնութեան:

§ 20. Ընդհանուր ժողովը ծանօթանալով խորհրդի ներկայացրած տեղեկագրի և տարեկան հաշուի և վերաստուգող յանձնաժողովի ստուգութեան հետ, նաստատում է կամ փոփոխութեանց ենթարկում այդ հաշիւն ու նախահաշիւը:

§ 21. Ընդհանուր ժողովներին նախագահում է խորհրդի նախագահը: Նախագահի բացակայութեան կամ հիւանդութեան ժամանակ ժողովը ընտրում է այդ օրուայ համար նախագահ

իւր վստահելի անդամներից մէկին ձայնից առաւելութեամբ:

§ 22. Խորհուրդն ունի իւր կնիքը «Խորհուրդ Փայաջուկ գիւղի «Ուղեցոյց միութեան» վերնագրով, որը պահպում է նաև խագահի մօտ խորհրդարանում:

§ 23. «Ուղեցոյցի» անդամները որևէ բողոքով, խնդրով կամ առաջարկութեամբ պէտք է զրաւոր գիմեն խորհրդին, որը քննութեան առնելով խնդիրը, անում է իւր որոշումը և գրաւոր յայտնում խնդրատուին:

§ 24. Խորհուրդն ամեն շաբաթ ունենում է իւր նստերը «Ուղեցոյցի» խորհրդարանում: Իւրաքանչիւր խնդիր որոշվում է ձայնից առաւելութեամբ:

§ 25. Խորհրդի պարտաւորութիւնն է հոգալ՝

Ա. Եկեղեցու փառագարդութեան մասին. «Ուղեցոյցի» խորհուրդն առանձին ուշադրութիւն պէտք է դարձնի, որպէս զի գիւղի եկեղեցին փառագարդութեան մէջ լինի: Շաբաթ երեկոները և կիրակի օրերը պատարգին եկեղեցում երգեն դպրոցի աշակերտները: Խորհրդի պարտքն է հոգալ, որ դպրոցի սաներից երկուսին դասընթացն աւարտելուց յետոյ կը թութիւն տայ Թիֆլիզի Ներսիսեան Դպրոցում կամ Գէորգեան ճեմարանում ապագայուս գիւղում կրօնուսոց լինելու և ուսուցչութիւն անելու համար, որ-

պէս զի ապազալում դիւղի դպրոցն ու եկեղեցին դրսից ուսուցիչ և քահանայ հրաւիրելու կարիք չունենան։ Խորհուրդն ամեն ջանք գործ պէտքէ դնէ, որ դիւղի քահանայք քարոզ խօսեն և որովհետեւ սկզբում այդ բանը դժուար կը լինի, ուստի քահանան պէտք է նախապատրաստուի կենդանի խօսքով հասկացնելու ժողովրդին Աստուծոյ խօսքը։

Բ. Տղայոց և օրիորդաց դպրոցի բարելաւութիւն։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ առանց մատաղ սերնդին կը թութիւն տալու, մարդս իւր սուրբ պարտականութիւններից ամենանշանաւորը չէ կատարում, խորհուրդն իւր առանձին ուշադրութիւնը պէտք է դարձնի տղայոց և օրիորդաց դպրոցների բարեկարգելու մասին։ Դպրոցը պէտքէ ունենայ երկու նախակրթարան և երկու հիմնական դասարան, թեմական նոյն դասարաններին համապատասխան, որպէս զի աւարտողը կարողանայ շարունակել իւր ուսումը, եթէ ցանկանայ, թեմական դպրոցներում։ Ուսումը բոլորի համար պէտք է լինի պարտադիր, իսկ չքաւորների համար ձրի։ Բոլորովին որը և անտէր երեխանների սնունդը և հագուստը հոգում է խորհուրդը «Ուղեցոյցի» միջոցներից։ Խորհուրդը պէտք է աշխատի հոգալ, որ ուսուցիչները և ձեռագործի վարժուհին ունենան պատրաստի բնակարան, ծառայ, վա-

ոելափայտ, լուսաւորութիւն, որ նոցա աշխատանքը լաւ վարձատրուի, որպէս զի պատրաստի անձինք հրաւիրուին գործի: Օրիորդաց դպրոցում բացի ձեռագործից պէտք է աւանդուի գորդեր գործելու արուեստը, որ շատերին մի կտոր հալալ հացի տէր կը դարձնի, իսկ տղայոց դպրոցում բացի աւանդելիք կրօնից, լեզուներից և առարկաներից, նաև հիւսնութիւն և կազմաբարութիւն: Ծրագիրը պիտի լրացուի դպրոցի մանկավարժական ժողովի և խորհրդի ցուցմամբ:

Գ. Գիւղում կարգ ու կանոն սահմանելու, գիւղացիների մէջ գոյութիւն ունեցող երկպառակութիւնների և կուսակցութեանց անտեղի կոխների առաջն առնելու մասին: Մանաւանդի նկատի առնելով այն հանգամանքը, որ գիւղի մէջ կարգապահութիւնը թուլ է և ամենմարդիւր ուղածն անելով խանգարում է գիւղի խաղողութիւնը և անպայման չարիք հասցնում, խորհրդի պարտքն է արգելել այդպիսիներին խանգարելու կարգապահութիւնը իրանց անտակտ վարմունքով, խօսքով կամ գործով, վիրաւորելով որևէ անձի կամ նրա ընտանիքի պատիւը: Այդպիսին հրաւիրում է խորհրդարան, ուր հարցը քննուելուց յետով, եթէ պարզուի, որ դա իրաւի յանցաւոր է, ենթարկում է կարեոր յանդիմանութեան ու պատժի և այդ որոշ-

մանը անպատճառ պէտք է հնազանդուի յանցաւորը։ Հակառակ դէպքում ամբողջ գիւղը դադարում է դրա հետ գործ ունենալու և բոյկոտի է ենթարկում դրան։

Արբեցողութիւնը, անառակ և ցոփ կեանք վարելը, գողութիւնն ու աւագակութիւնը խըստիւ արգելում է և անուղղայ յանցաւորը խորհրդի որոշմամբ յանձնւում է մարմնաւոր իշխանութեանը սահմանեալ պատիժը կրելու համար։

Դ. Գիւղի ինքնապաշտպանութեան մասին. Ինքնապաշտպանութիւնը պիտի լինի ժողովրդական. և ամեն մի անձն իւր սուրբ պարտականութիւնը պիտի համարէ արեան մինչև վերջին կաթիլը պաշտպանել գիւղի պատիւը և նրաշահերը։

Ուստի խորհուրդը ժամանակաւորապէս իւր վրայ առնելով գիւղի ինքնապաշտպանութեան գործը, ամեն կերպ աշխատում է հրաւէր կարդալու ամենքին իրենց զէնքով և պատրաստութեամբ կամաւոր զինուոր դառնալ ինքնապաշտպանութեան գործին առանց տատանուելու և առարկութեանց։

Խորհուրդն իւր կողմից օգնում է կանոնաւորելու զինավարժութեան գործը և արժան գընով զէնք մատակարարելու, իսկ չունեորներին խորհրդարանի հաշուով ձրիապէս։

Ե. Գրադարանի և ընթերցարանի թատ-

լոնի և դասախոսութեան մասին. Ի նկատի առնելով ընթերցանութեան կարեւորութիւնը, խորհուրդն հիմնում է գրադարանը՝ ընթերցարան, յանձնելով դրա կառավարութիւնը խորհրդից ընտրուած վատահելի ձեռնահաս անձին։ Այդնպատակով նա իւր գումարներից իւրաքանչիւր տարի յատկացնում է մի գումար, գնում է հայերէն և ուրիշ լեզուներով գըրքեր ու լրագիրներ։ Գըրքերից և լրագիրներից օգտառելու համար Խորհրդարաննը սահմանում է առանձին կանոններ։

Եթէ միջոցները ներեն, ապա Խորհուրդը Ուսուցչական խմբի և դիւղի ինտիլէգէնդ երիտասարդների աջակցութեամբ կազմակերպում է թատրոնական ներկայացումներ և դասախոսութիւններ ժողովրդին հասկանալի լեզուով և ժողովրդական կարիքներին համաձայն։ Դրանցից ստացուած արդիւնքը յատկացնուում է խորհրդագարանին նրա հիմնական միջոցները զօրացնելու համար։

Նոյնպէս խորհուրդն իւր իրաւասութեան ներքոյ է առնում ուսուցիչներ և վարժուհիներ և բժիշկ հրաւիրելու և մի փոքրիկ դեղատուն բանալու հոգով, դիւղի գիշերուայ և ցերեկուայ պահապանների, միրարի և դօրուղչիների մասին։ Մէկ խօսքով այն բոլոր խնդիրների մասին, ուրնք պէտք է բարելաւեն դիւղացու տնտեսա-

7/11 1922

Կան, մասւոր և բարոյական գործացման գործը:

§ 26. Այս հայտը կամ այլ բարոր խնդիրների և գիւղական ուժի շահագութեան մասին կազմում է առանձին տեղեկագիր, առաջարկում է այն ի հաստատութիւն ընդհանուր ժողովի և ապա հրատարակում ի գիտութիւն «Ուղեցոյցի բոլոր անդամներին և Փայաջուկի հասարակութեան»:

§ 27. Իւրաքանչիւր օտարական գիւղը մտնելիս պիտի ունենայ անցագիր կամ յանձնարական իւր ժրաեղից լինելու մասին և ներկայացնի խորհրդին: Այսուհետեւ խորհուրդը որոշում է նրա գիւղում մալու ժամանակամիջոցը:

§ 28. Ոչ ոք իրաւունք չունի դիմագրելու «Ուղեցոյցի» խորհրդի որոշումներին: Դիմագրողի մասին խորհուրդը վերաստուգող յանձնաժողովի անդամների հետ խորհրդակցելով որոշում է կայացնում և յայտնում դիմագրողին:

§ 29. Այդպիսի որոշմանն էլ չը հնազանդուող գիւղի համախօսականով արտաքսուում է գիւղից և հարկը պահանջածին պէս պատշաճաւոր մարմաւոր իշխանութեան կարգադրութեամբ նաև երկրի սահմաններից:

§ 30. Խորհուրդը իւր սեպուհ պարտքն է համարում ամեն ջանք գործնելու համերաշխութիւն պահպանելու բոլոր հարեան գիւղերի հետ և նրանց բոլոր ազգաբնակութեան առանց լեզուի և կրօնի խորութեան և օր առաջ ամեն տեսակ պատահելիք ընդհարումների դէմ առնելու, միջնորդ խաղաղարար հանդիսամալով ամեն տեղ:

